REPUBLIC OF ARMENIA
KOTAYK REGION MAYAKOVSKI VILLAGE

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ РЕГИОН СЕЛО МАЯКОВСКИЙ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք.
գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

N 104
22 մայիսի 2017 թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Գուլոյան

''Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ներկայացվում 2017 թվականի մայիս ամսվա ընթացքում Մայակովսկի համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումների պատճենները. / թիվ 36-Ա,37-Ա և 38-Ա / :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» մայիսի 2017 թվական N 36 Ա

## ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԻԱՄՍՅԱԿ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42 րդ հոդվածի 1 ին մասի 16 րդ կետով՝ համայնքի սանիտարական վիճակը բարելավելու, բարեկարգելու և ձմռան ընթացքում առաջացած աղբը հեռացնելու նպատակով.

1.Սույն թվականի մայիսի 5 ից մինչև հունիսի 5 ը հայտարարել սանիտարական մաքրման միամսյակ:

2. Սանիտարական միամսյակը կազմակերպված և բարձր մակարդակով անցկացնելու նպատակով ստեղծել ժամանակավոր հանձնաժողով հետևյալ կազմով.

Բ.Մարտիրոսյան հանձնաժողովի նախագահ, համայնքի ղեկավարի տեղակալ,

Գ.Ասատրյան հանձնաժողովի անդամ, առջին կարգի մասնագետ

Ա.Հարությունյան հանձնաժողովի անդամ, ավագանու անդամ:

3. Հանձնաժողովին՝ մեկ շաբաթվա ընթացքում աշխատանքների կազմակերպման համար ձեռք բերել անհրաժեշտ միջոցներ,տրամադրել փոխադրամիջոց՝աղբը տեղափոխելու համար :

4. Մայիսի 20 ը հայտարարել համայնքային շաբաթօրյակ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.մայիսի 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մայիսի 2017 թվական N 37-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 րդ հոդվածով , ***ո ր ո շ ու մ ե մ՝***

1. Մայակովսկի համայնքի ԼՂՀ-ում զոհված ազատամարտիկների մայրերին՝ մայիսի 9-ի հաղթանակի և խաղաղության օրվան նվիրված , ցույց տալ դրամական օգնություն՝ սոց.օգնություն 4729 հոդվածից .

Ղազարյան Գայանե Հրաչի 10 000 դրամ
Անտոնյան Մանյակ Վարդանի 10 000 դրամ,

Ընդամենը 20 000 / քսան հազար / դրամ :

2. Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.մայիսի 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մայիսի 2017թվական N 38-Ա

## ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 04-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով ***որոշում եմ՝***

1. Համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 16-ի « Մայակովսկի համայնքի 2017 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հաստատելու մասին » N 04 Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի :

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.մայիսի18